ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/95

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ Սեյրան Բալասյան Արթուրի Ա/Ձ-ի լիազորված ներկայացուցիչ Վ. Էլոյանի (լիազորագիր՝ տրված 28.12.2021թ.),

քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում Սեյրան Բալասյան Արթուրի Ա/Ձ-ի կողմից 24.12.2021թ. ներկայացված և 24.12.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/95 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Սեյրան Բալասյան Արթուրի Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Սեյրան Բալասյան Արթուրի Ա/Ձ-ն (հետայսու՝ Մասնակից) 24.12.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար սույն թվականի նոյեմբերի 23-ին ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ

2021/3 ծածկագրով պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի բացման ժամկետ է սահմանվել 03.01.2022թ. ժամը 11:00: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանում է, որ «Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը»: Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում: Գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»: Տվյալ դեպքում Պատվիրատուն, Մրցույթի հրավերում որպես բնութագիր է սահմանել.

- Պահնորդները պետք է կանխեն նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը, սակայն չի նշել թե ինչ եղանակով, արդյոք կան սարքեր, որոնց միջով անցնելիս համապատասխան ազդանշան է լինելու, թե պահնորդը պետք է ձեռքին ունենա հատուկ ստուգելու գործիք (ում հաշվին է դա լինելու), թե ձեռքերով պետք է իրականացնի զննում և այլն
- Պահնորդները պետք է ապահովեն պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային սահմանված պայմանակարգերի իրականացումը, սակայն մրցույթով չի ներկայացրել անցագրային և ներօբյեկտային սահմանված պայմանակարգերը,

• Պահնորդները պետք է այցելուներին տրամադրեն մեկանգամյա անցագրային թերթիկներ՝ անհրաժեշտության կամ համապատասխան հրահանգի դեպքում, սակայն չի նշվել, թե ով պետք է տրամադրի անցագրային թերթիկները,

• Պահնորդական ծառայությունն իրականացվելու է նշված հասցեներում շուրջօրյա՝ առանց հանգստյան և տոնական օրերի, քսանչորս ժամյա և ութ ժամյա գրաֆիկով պահնորդների փոփոխական քանակով, համաձայն կից ներկայացվող Ցանկի, ցանկով պարտադրում է աշխատակիցների քանակ, որը որևէ կերպ հիմանավորված չէ, քանի որ մասնակցից պահանջում է ծառայություն և ծառայության պատշաճ իրականացման համար մասնակիցը պետք է համակարգի ծառայության մատուցումը,

• Պահնորդների պահակակետերը պետք է համալրված լինեն հատուկ տեխնիկական միջոցներով՝ ձեռնաշղթաներով, մահակներով և լապտերով, բացառությամբ կից ներկայացվող Ցանկի 4-րդ կետի, որտեղ մատուցվելու է նաև հրազենով զինված ծառայություն, սակայն չի նշել պահանջվող տեխնիկաների նվազագույն բնութագրերը, քանի որ սա լինելու է մասնակցի միջոցներով, ապա էական նշանակություն ունի գնառաջարկի ձևավորման վրա,

• Մասնակիցը պետք է ներկայացնի նաև յուրաքանչյուր անցակետի համար 1 օրվա մատուցված ծառայության արժեքը: Այս առաջարկը ներկայացնելու համար մրցույթի հրավերով պահանջվել է ներկայացնել գնառաջարկին կից «Հավելված 2.1», հետևյալ անվանմամբ «Յուրաքանչյուր 1 անցակետի համար 1 օրվա մատուցված ծառայության արժեք», սակայն անցակետերի ներկայացված աղյուսակում առկա են հասցեներ, որտեղ մեկ հասցեում կա մինչև հինգ անցակետ: Այս դեպքում գնառաջարկի ներկայացման ձևը հստակ սահմանած չէ, ինչը կարևոր է իմանալ գնառաջարկ ներկայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3 ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել կատարելու «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում օրենսդրությանը համապատասխան փոփոխությունները, իսկ վերջինիս անհնարինության դեպքում չկայացած հայտարարել Մրցույթը, և քանի որ մոտակա օրերին առկա են ամանորյա տոներ և Պատվիրատուն դեռ կարող է հետաձգել հայտերի ներկայացման վերջնաժամկետը, խնդրում ենք միջանկյալ որոշմամբ Պատվիրատուին պարտավորեցնել բացման օրը տեղափոխել մինչև բողոքի որոշման հրապարակումը»:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.12.2021թ. ժամը 09:22-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 28.12.2021թ. թիվ 1/18-2/84089-2021 գրությամբ, բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ուսումնասիրելով 2021 թվականի դեկտեմբերի 24-ի N /ԲՔԱ-ԳՆ/1/21428-2021 գրությամբ ներկայացված Սեյրան Բալասյան Արթուրի Ա/Ձ-ի կողմից բերված բողոքը՝ հայտնում ենք հետևյալը.

- 1-ին հարցի վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում (այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) նյութական արժեքների **չարտոնված** տեղաշարժի կանխումն իրականացվում է ներօբյեկտային սահմանված պայմանակարգերով (ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներով): Ավելին, բնութագրով որևէ պահանջ սահմանված չէ, որ ծառայություն մատուցող կազմակերպությունն այս մասով սահմանված պահանջի իրականացումը պետք է ապահովի իր տեխնիկական միջոցներով: Միաժամանակ, բնութագրով հստակ սահմանված է, որ խոսքը վերաբերում է նյութական արժեքների **«չարտոնված»** տեղաշարժին, այսինքն՝ միանգամայն պարզ է, որ պատվիրատուի ներքին պայմանակարգերով կարգավորված է բարձրացված հարցը և ծառայություն մատուցողը պարզապես պետք է հետևի և ապահովի այդ կանոնակարգերի պահպանմանը:
- 2-րդ հարցի վերաբերյալ՝ պահպանվող օբյեկտում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերն իրենցից ներկայացնում են ներքին իրավական ակտեր, որոնք տրամադրվում են մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված և պայմանագիր կնքած կազմակերպությանը: Ընդ որում, գնման առարկայի բնութագրով մանրամասն սահմանված են բոլոր պահանջները, որոնք պետք է ապահովվեն ծառայություն մատուցող կազմակերպության կողմից, իսկ անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերով պարզապես ամրագրված են այդ պահանջների իրավական հիմքերը: Այսինքն,

բնութագրով ամբողջությամբ, մանրամասն, բավարար ծավալով սահմանված են այն բոլոր պահանջները, որոնք անհրաժեշտ են մրցույթի հնարավոր մասնակիցներին հասկանալու, ընկալելու գնման առարկայի բնութագիրը և հետևաբար հաշվարկելու ծառայության մատուցման արժեքը:

- 3-րդ հարցի վերաբերյալ՝ պահնորդների կողմից այցելուներին **անհրաժեշտության կամ համապատասխան հրահանգի դեպքում** տրամադրվող մեկանգամյա անցագրային թերթիկներն ապահովվում է պատվիրատուն, ավելին՝ բնութագրով սահմանված և ներկայացված չէ նշված թերթիկների ձևը, բովանդակությունը, հետևաբար դրանք չեն կարող ապահովվել ծառայություն մատուցող կազմակերպության կողմից և վերջինիս հաշվին: Այսինքն, հստակ է, որ անցագրային թերթիկները ծառայություն մատուցող կազմակերպությանը տրամադրվում են պատվիրատուի կողմից, իսկ պահնորդներն էլ անհրաժեշտության կամ համապատասխան հրահանգի դեպքում այցելուներին տրամադրում են այդ թերթիկները:
- 4-րդ հարցի վերաբերյալ՝ հրավերի տեխնիկական բնութագրին կից ներկայացված ցանկով՝ ըստ ծառայության մատուցման հասցեների նշված է պահանջվող պահնորդների թիվը (քանակը), որը բողոքաբերի կարծիքով պարտադրանք է և հիմնավորված չէ: Տվյալ դեպքում հարկ է նկատել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ ***պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:*** Այսինքն, հաշվի առնելով ծառայության մատուցման տվյալ հասցեի (պահպանվող օբյեկտի) մակերեսը, անցակետերի քանակը, այդ հասցեում տեղակայված ՀՀ ՊԵԿ ստորաբաժանման աշխատանքի բնույթը, ծավալը, կարևորությունը և մի շարք այլ հանգամանքներ՝ պատվիրատուն կազմել և հաստատել է գնման առարկայի բնութագիրը, այդ թվում՝ ըստ ծառայության մատուցման հասցեների, սահմանել է կոնկրետ պահնորդների թիվ, որոնց միջոցով պետք է իրականացվի պահնորդական ծառայությունը: Ավելին, հրավերով մասնակցից պահանջվել է ներկայացնել յուրաքանչյուր հասցեի անցակետի համար մեկ օրվա մատուցվող ծառայության արժեքը: Այսինքն, բնութագրով հստակ սահմանվել է յուրաքանչյուր հասցեի անցակետերի քանակը,

անցակետերում պահանաջվող պահնորդների թիվը, որոնց հիման վրա մասնակիցը պետք է հաշվարկի և ներկայացնի գնային առաջարկ:

Հարկ է նաև անդրադառնալ բողոքաբերի՝ սույն մասով ներկայացված հետևյալ ձևակերպմանը, այն է՝ *«ծառայության պատշաճ իրականացման համար **մասնակիցը պետք է համակարգի ծառայության մատուցումը»:*** Տվյալ դեպքում, հարկ է արձանագրել, որ մասնակիցը (ծառայություն մատուցողը) պարտավոր է մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի հիման վրա մատուցել բնութագրին համապատասխան ծառայություն և ոչ թե համակարգել ծառայության մատուցումը, ավելին՝ պայմանագրի կատարման և կառավարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է պատվիրատուն:

- 5-րդ հարցի վերաբերյալ՝ տեխնիկական բնութագրով սահմանված է, որ պահնորդական ծառայությունները պետք է մատուցվեն «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված պահանջներին համապատասխան: Պահնորդների պահակակետերում զենքի, հատուկ միջոցների (ձեռնաշղթաներ, մահակներ) և տեխնիկական միջոցների բնութագրերը չեն կարող սահմանվել պատվիրատուի կողմից, քանի որ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենքով, մասնավորապես՝

- Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ *մասնավոր պահնորդական կազմակերպությունը պահնորդական ծառայություններ մատուցելու նպատակով **զենք է ձեռք բերում և օգտագործում** հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց համար՝ **«Զենքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:***

- Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *յուրաքանչյուր մասնավոր պահնորդական կազմակերպության կողմից օգտագործվող **հատուկ միջոցների տեսակը, քանակը սահմանվում են ոստիկանության պետի հրամանով՝ հիմք ընդունելով հատուկ միջոցների գործադրման պատրաստություն անցած պահնորդների (թիկնապահների) թիվը:***

- Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *մասնավոր պահնորդական կազմակերպությունը պահնորդական ծառայություններ մատուցելիս իրավունք ունի օգտագործելու պահպանության և այլ տեխնիկական միջոցներ:* ***Արգելվում է այնպիսի տեխնիկական միջոցների օգտագործումը, որոնք՝***

1) կարող են վնաս պատճառել քաղաքացիների կյանքին և առողջությանը կամ շրջակա միջավայրին.

2) նախատեսված (մշակված, հարմարեցված, ծրագրավորված) են տեղեկատվություն գաղտնի ձեռք բերելու համար:

- 6-րդ հարցի վերաբերյալ՝ ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3 ծածկագրով հրավերով հստակ սահմանված է գնային առաջարկի ներկայացման կարգը, իսկ Հավելված 2-ով՝ ներկայացման ձևը:

Հավելված 2.1-ով ներկայացված յուրաքանչյուր տողում նշված է ծառայության մատուցման հասցեն (հասցեները), որի համար պետք է ներկայացվի մատուցվող ծառայության արժեքը: Յուրաքանչյուր տող դիտարկվում է 1 միավոր: Այսինքն՝ աղյուսակը բովանդակալից նկարագրում է դրա լրացման կարգը և հստակ սահմանում է գնային առաջարկի ձևը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.12.2021թ. ժամը 09:22-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է պահնորդական ծառայության տեխնիկական բնութագիրը:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Սեյրան Բալասյան Արթուրի Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 28.12.2021թ. թիվ 1/18-2/84089-2021 գրությունը, «ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1)պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի ***բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող*** ապրանքի, աշխատանքի կամ ***ծառայության հատկանիշները***, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) ***<u>պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.</u>***

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

(...)

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2021/3» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, պահնորդական ծառայության համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«1. Պահնորդական ծառայությունն անհրաժեշտ միջոցների ներգրավմամբ՝ պահպանվող օբյեկտների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովող գործողությունների ամբողջություն է, որն իրականացվում է «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքով սահմանված պահնորդների՝ պահպանվող

օբյեկտների մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների, դրանց հարող տարածքների, տրանսպորտային միջոցների պաշտպանություն իրականացնելու համար նշված օրենքով նախատեսված որակավորում ունեցող, պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձանց կողմից: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում պատվիրատուի պահանջով կատարողը պարտավոր է ներկայացնել ծառայությունում ներգրավված պահնորդների որակավորումը հավաստող փաստաթղթերը:

2. Պահնորդական ծառայությունը մատուցվում է պահնորդների միջոցով, ովքեր պետք է՝

- իրականացնեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահնորդական ծառայություն,
- շուրջօրյա պարեկության միջոցով կանխարգելեն, կանխեն և կասեցնեն սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտներում իրավախախտումները,
- ապահովեն պահպանվող տարածքում գտնվող անձանց պատշաճ վարքագիծը,
- կանխեն նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,
- անմիջապես արձագանքեն արտակարգ իրավիճակների դեպքում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն), և այդ մասին անհապաղ տեղեկացնեն անվտանգությամբ զբաղվող ստորաբաժանմանը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության անձնակազմի անվտանգության և պահպանության (այսուհետ ԱԱ և Պ) բաժնի պատասխանատուին,
- պահնորդական ծառայությունը ընդունելիս և հանձնելիս պարտադիր կերպով լրացնեն ընդունման և հանձնման մատյանները, արձանագրելով նաև ծառայության ընթացքում տեղի ունեցած միջադեպերը, իրավախախտումները, պատահարների դեպքերը,
- ապահովեն պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային սահմանված պայմանակարգերի իրականացումը,
- աշխատակիցների և այցելուների մուտքի/ելքի ժամանակ իրականացնեն անվտանգության անհրաժեշտ միջոցառումներ, ներառյալ՝ գրանցում, հաշվառում,

հետևեն տվյալ ժամանակահատվածում օրենքով կամ հրամանով սահմանված ընդհանուր հակահամաճարակային կանոնների պահպանմանը,

- այցելուներին տրամադրեն մեկանգամյա անցագրային թերթիկներ՝ անհրաժեշտության կամ համապատասխան հրահանգի դեպքում,
- աշխատանքային օրվա ավարտից հետո պարբերաբար՝ նվազագույնը 4 անգամ, պարտադիր շրջայց կատարեն շենքի ներսում և/կամ պահպանվող տարածքում, կախված պահպանվող օբյեկտի առանձնահատկություններից, որի վերաբերյալ այդ նպատակով նախատեսված մատյանում գրանցում է կատարվում,
- կատարեն պահպանվող տարածքի անվտանգության ապահովման հետ կապված՝ ԱԱ և Պ բաժնի իրավասու անձանց հանձնարարությունները,
- արտակարգ իրավիճակի դեպքում օժանդակեն աշխատակիցներին՝ վտանգը չեզոքացնելու կամ դրա հետևանքները վերացնելու կամ նվազեցնելու հարցում,
- իրականացնեն պահպանվող տարածքի դռների բանալիների ապահով հսկողություն՝ դրանք հանձնելով միայն լիազորված անձանց:

3. Պահպանության կառուցվածքը՝

Պահնորդական ծառայությունն իրականացվելու է նշված հասցեներում շուրջօրյա՝ առանց հանգստյան և տոնական օրերի, քսանչորսժամյա և ութժամյա գրաֆիկով պահնորդների փոփոխական քանակով, համաձայն կից ներկայացվող Ցանկի,

Ծառայության ընթացքում աշխատակցի հանգստի գրաֆիկը (աշխատանքային ժամերը)՝ կախված պահպանվող օբյեկտի առանձնահատկություններից ֆիքսվում և համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:

Պահնորդները պետք է ստորագրեն գաղտնիության տեղեկատվության անվտանգության պարտավորագիր, համաձայն կից ներկայացվող Ձև 2-ի,

Վերոնշյալ բոլոր պայմանները պարտադիր են և պետք է իրականացվեն պահնորդական ծառայությունը մատուցողի կողմից:

Պահնորդական ծառայություն մատուցողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կկրի այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով կհասցվի Պատվիրատուին, ինչպես նաև իրեն վստահված նյութական արժեքների վնասի համար:

Պահնորդական ծառայություններ մատուցելիս պահնորդները պետք է կրեն

եղանակային պայմաններին համապատասխան ամառային և ձմեռային միասնական համազգեստ, որի տեսքը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ ու ԱԱ և Պ բաժնի համապատասխան հրամանից հետո անցում կատարի ձմեռային համազգեստից ամառայինի և հակառակը:

Պահնորդների պահակակետերը պետք է համալրված լինեն հատուկ տեխնիկական միջոցներով՝ ձեռնաշղթաներով, մահակներով և լապտերով, բացառությամբ կից ներկայացվող Ցանկի 4-րդ կետի, որտեղ մատուցվելու է նաև հրազենով զինված ծառայություն:

Կատարողը պարտավոր է՝

Պայմանագրի կատարման ընթացքում պահնորդի կողմից պահնորդական ծառայությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում՝ Կատարողը պարտավոր է անհապաղ շտկել առկա խնդիրը, հակառակ դեպքում՝ Պատվիրատուի պահանջով 1 աշխատանքային օրվա ընթացքում փոխարինել ծառայություն իրականացնող պահնորդին այլ պահնորդով:

Կատարողը պարտավոր է իրականացնել հսկողություն և զեկուցել ԱԱ և Պ բաժնի պետին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի պահանջով շրջիկ խմբի միջոցով օրական առնվազն երեք անգամ կազմակերպել ծառայության մատուցման ստուգում....»:

Այսպիսով՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***<u>Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝</u>***

1) <u>պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.</u>

2) <u>գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:</u>

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները:

Այսպիսով՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք

համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիրը՝ Սեյրան Բալասյան Արթուրի Ա/Ձ-ի կողմից բողոքով վճարկող մասերով, և այն համադրելով Պատվիրատուի կողմից 28.12.2021թ. թիվ 1/18-2/84089-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշման հետ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն իր գնման կարիքին համապատասխան հստակ նկարագրել է պահնորդական ծառայության ձեռքբերման հատկանիշները և միևնույն ժամանակ թույլ չի տվել «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ տեխնիկական բնութագրի կազմման համար սահմանվող պահանջների խախտումներ:

Ընդ որում՝ հարկ եմ համարում արձանագրել, որ վերոնշված տեխնիկական բնութագրով հստակ սահմանվել է, որ պահնորդական ծառայությունները պետք է մատուցվեն «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, այսինքն՝ պահնորդական ծառայություն մատուցողը պետք է առաջնորդվի նաև «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներով:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Սեյրան Բալասյան Արթուրի Ա/Ձ-ի բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Սեյրան Բալասյան Արթուրի Ա/Ձ-ի կողմից 24.12.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**